

Հաստատված է՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի
Տնօրինության 12.05.2008թ.
թիվ 14-Լ որոշմամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՍԱՆ ԲԱՑԱՌՍԱՆՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ3

2. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ3

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊԵՐԸ3

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԿԻՐԱՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ4

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ4

6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ5

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԳՐՈՒՅԹՆԵՐ6

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն ուղեցույցն ուղղված է ապահովելու՝
 - 1.1.1. Բանկի հաճախորդների շահերի գերակայության ապահովումը Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ,
 - 1.1.2. Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը,
 - 1.1.3. Բանկի պարտավորությունները՝ գործելու ազնիվ և անկողմնակալ վերջինիս հաճախորդների և գործընկերների հետ:

2. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. *Արժեթուղթ*՝ ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ սահմանվող ցանկացած գույքային իրավունք:
- 2.2. *Հաճախորդ*՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Բանկն ունի գործող ներդրումային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր,
- 2.3. *Շահերի բախում*՝ ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող հակասություն Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց միջև առաջացող գույքային և/կամ այլ շահերի հակասություն, որի արդյունքում Բանկի և/կամ բանկի աշխատակիցների գործողությունները կամ անգործությունը առաջացնում են վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ Հաճախորդի համար:

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

- 3.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերը հետևյալն են՝
 - 3.1.1. Հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով արժեթղթերի վաճառք Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված պատվերում նշված էական պայմանները,
 - 3.1.2. Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
 - 3.1.3. Հաճախորդի միջոցների ներդրում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
 - 3.1.4. Հաճախորդին պատկանող արժեթղթերով Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով Հաճախորդի ներդրումային նպատակները,
 - 3.1.5. Հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները համապատասխանում են Բանկի, Բանկի աշ-

- խատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերին,
- 3.1.6. Մեծ ծավալներով կամ Հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձում Հաճախորդից,
 - 3.1.7. Հաճախորդի միջոցների օգտագործում Բանկի սեփական առևտրային ռազմավարությունն իրականացնելու նպատակով,
 - 3.1.8. Բանկում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում՝ Բանկի սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,
 - 3.1.9. Էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց:
 - 3.1.10. Վերոնշյալ դեպքերի ցանկը սպառնիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել Շահերի բախման նաև այլ դեպքերով:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 4.1. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Բանկի համապատասխան իրավասություններ ունեցող աշխատակիցները պարտավոր են՝
 - 4.1.1. պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին կանոնակարգերի պահանջները,
 - 4.1.2. վեր դասել Բանկի և Բանկի հաճախորդների շահերը սեփականից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Բանկի շահերի վրա,
 - 4.1.3. ապահովել ներդրողների (հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը,
 - 4.1.4. իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Բանկը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- 5.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Վերոնշյալ շահերի պաշտպանման նպատակով Բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

- 5.1.1. չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Բանկի կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,
- 5.1.2. Հաճախորդի շահերը համարել գերակա Բանկի շահերի նկատմամբ՝ հաճախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ,
- 5.1.3. Հաճախորդների պատվերների համաձայն իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,
- 5.1.4. կնքել գործարքներ բացառապես Հաճախորդների հետ կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող կանոններով սահմանված կարգով,
- 5.1.5. գանձել միջնորդավճարներ, համաձայն Բանկի գործող սակագների:

6. ԸԱՀԵՐԻ ԲԱՆՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- 6.1. Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր Շահերի բախման բացառման նպատակով Բանկում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝
 - 6.1.1. Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված կարգով,
 - 6.1.2. Բանկն իրավասու է չկատարել հաճախորդի պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին,
 - 6.1.3. Բանկի համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Բանկի սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց կամ հաճախորդի պատվերը մեկ այլ հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է հաճախորդի շահերից և այն չի խոչնդոտում վերջինիս պատվերի կատարմանը,
 - 6.1.4. Բանկի աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին,
 - 6.1.5. Բանկում առանձնացվել են գործարքի կնքման նպատակով Բանկ ներկայացված պատվերների ընդունումը և ըստ ստացված հայտի համապատասխան գործարքն իրականացնող ստորաբաժանումների գործառնությունները,
 - 6.1.6. Բանկի աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որը վերջնական նպատակ է հետապնդում Բանկի շահերին գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծում, կամ որը հակասում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին,

- 6.2. Բանկի և Բանկի հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման կանխարգելման նպատակով Բանկը՝
- 6.2.1. մշակել և հաստատել է պատվերների ընդունման և կատարման, ինչպես նաև կնքված գործարքների հաշվառման ընթացակարգեր,
 - 6.2.2. մշակել և հաստատել է առանձին ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները հստակ սահմանող կանոնակարգեր, և նշված գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն կրող անձանց ցուցակը,
- 6.3. Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ Հաճախորդներին վերջիններիս արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով, բայց չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կազմից:

7. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատակիցները պարբերաբար հրահանգավորվում են սույն ընթացակարգով, Բանկի այլ ներքին ընթացակարգերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ՝ Շահերի բախման կանխարգելմանն ուղղված միջոցառումների պահպանման նպատակով:
- 7.2. Բանկի յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի է դարձել ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվություն, պարտավոր է տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Բանկի ներքին աուդիտն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին՝ համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:
- 7.3. Սույն ուղեցույցը տրամադրվում է Բանկի հաճախորդներին վերջիններիս պահանջով, ինչպես նաև տեղադրվում է Բանկի ինտերնետային կայքում www.armswissbank.am հասցեով: